

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

**СБОРНИК НАУЧНЫХ
СТАТЕЙ**

**COLLECTION OF SCIENTIFIC
ARTICLES**

3 (3)

Общественные науки - Social sciences

**(Юриспруденция, философия, экономика,
социология, журналистика - Jurisprudence, Philosophy,
Economics, Sociology, Journalism)**

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ – YSU PRESS

2014

2

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

3 (3)

Հասարակական գիտություններ

(Իրավագիտություն, փիլիսոփայություն, տնտեսագիտություն,
սոցիոլոգիա, ժուռնալիստիկա)

Հրատարակում է
ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution
of the Academic Council of YSU

խմբագրական խորհուրդ՝

տ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Գ. Ղարիբյան
ի. գ. դ., պրոֆ. Ա. Գաբուզյան
ի. գ. դ., պրոֆ. Ա. Հայկյանց
ի. գ. դ., պրոֆ. Ս. Դիլբանդյան
փ.գ.դ., պրոֆ. Հ. Միրզոյան
փ.գ.դ., պրոֆ. Ս. Ջաքարյան
փ.գ.դ., պրոֆ. Ա. Մկրտիչյան
տ.գ.դ., պրոֆ. Ա. Առաքելյան
բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Հովսեփյան
ք.գ.դ., դոց. Ա. Աթանեսյան
ի.գ.թ., դոց. Գ. Բեքմեզյան
ի.գ.թ., դոց. Կ. Գևորգյան
փ.գ.թ., դոց. Ա. Բաղդասարյան
փ.գ.թ., դոց. Ն. Մկրտչյան
փ.գ.թ., դոց. Ա. Ղարազուլյան
փ.գ.թ., դոց. Ա. Խաչատրյան
տ.գ.թ., դոց. Լ. Մնացականյան
բ.գ.թ., դոց. Ա. Մենենշյան
փ.գ.թ., Ա. Բալայան
փ.գ.թ. Կ. Յարայան
ասիստ. Լ. Ղազարյան

Հրատ. պատասխանատու խմբագիր՝ Մ. Մալխասյան

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55-55-70, publishing@ysu.am
Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական
գիտական ընկերություն
Հասցե՝ ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 60) 71-01-94, sss@ysu.am
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ ssspub.yasu.am

ԱՂՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՏՊՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՈՒՆՈՒ

Հասնիկ Մելիքսեթյան

ԵՊՀ, Ժուռնալիստիկայի ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող

Գիտ. դեկ.՝ Բ.Գ.Ղ., պրոֆ. Դ. Պետրոսյան

Էլփոստ՝ hasmikmeligsetyan@yahoo.com

Հայաստանն, արդեն 20 տարուց ավելի է, ինչ տեղեկատվական և քարոզչական պատերազմում է Աղրբեջանի հետ: Եվ այդ պատերազմի ընթացքում տեղեկատվության չափից դուրս արտահոսքի պայմաններում հայ ժուռնալիստիկայում առաջանում են ոչ ճիշտ վերլուծություններ, արտատպումներ:

Քարոզչության արտատպումն առնվազն երկու տիպի կարելի է բաժանել՝

ա. Երբ աղրբեջանական քարոզչությունն առանց որևէ մեկնաբանության փոխանցվում է հայկական լրատվամիջոցներով:

բ. Երբ աղրբեջանական քարոզչությունը «մարսված» (վերաշարադրված, արդեն որպես սեփական մտքի) տեսքով է հայտնվում:

Ներկայացնենք, թե ինչպես են աղրբեջանական նյութերը բառացիորեն թարգմանվում ու տեղադրվում հայկական կայքերում: Երբեմն որոշ խմբագիրներ նույնիսկ չեն խուսափում կենդանի հղում (active link) տեղադրելուց:

Օրինակ՝ mamul.am կայքը հրապարակել է «Բաքուն խոստանում է արյունահեղությունը կշարունակվի» վերնագրով մի նյութ: Վերնագիրն արդեն իսկ որոշակի նրբերանգ է ենթադրում: Կարողվուց հետո պարզվում է, որ նյութը կայքի հեղինակային գրառումներից չէ, այլ վերցվել է ֆեյսբուք սոցիալական ցանցի օգտատեր Տիգրան Աբրահամյանի էջից:

Կայքը մասնավորապես մեջբերում է աղրբեջանական կողմի հայտարարությունը՝ կապված դիպլոկահարների դուրսբերման հարցի հետ:

«Աղրբեջանի ՊՆ մամուլի ծառայության քարտուղար Էլզար Սաբիրօղլուն սահմանային զորամասեր կատարած հերթական այցի շրջանակներում, անդրադառնալով միջազգային հանրության պահանջին՝ դուրս բերել դիպլոկահարներին առաջնային գծից, ուշագրավ հայտարարություն է արել. Աղրբեջան պետությունը, պաշտպանության նախարարությունը, հրաժարվում է հանել դիպլոկահարներին առաջնային գծից այնքան ժամանակ, քանի դեռ պատերազմը չի ավարտվել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայ-աղրբեջանական և ղարաբաղա-աղրբեջանական զորքերի շփման գծում գրանցվող մահվան ելքերով կորուստների առյուծի բաժինը գրանցվում է դիպլոկահարների գործողությունների արդյունքում, ապա կարելի է եզրակացնել, որ Աղրբեջանի ռազմական և քաղաքական ղեկավարությունը, ՊՆ մամուլի ծառայության ղեկավարի շուրթերով սպառնում են շարունակել սադրանքներն այնքան ժամանակ, քանի կողմերը ԼՂ հարցում վերջնական համաձայնության չեն եկել¹:

Նյութը թեմային չհետևող ընթերցողների համար առաջացնում վախ ու լարվածություն: Ահասարսուռ վերնագիրը թույլ չի տալիս հանգիստ դատել: Բացի այդ, կարծես նշվի. «Ձեր երեխաներին դիրքերում վտանգ է սպառնում, դիպլոկահարներ են աշխատում, իսկ հայկական կողմը բան չի անում»: Նյութում տարանջատվում են «հայ-աղրբեջանական» և «ղարաբաղա-աղրբեջանական» արտահայտությունները: Չկա «ղարաբաղցի» ազգ, սակայն մարդկանց ուղեղներում արտատպվում է հենց

¹ Տե՛ս <http://mamul.am/am/news/41040/%D5%A2%D5%A1%D6%84%D5%B8%D6%82%D5%B6-%D5%AD%D5%B8%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7-%D5%A1%D6%80%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A5%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%AF%D5%B7%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%AF%D5%BE%D5%AB>.

այդ տերմինը, այնինչ կարելի էր նշել հայ-ադրբեջանական սահմանի «Արցախի հատված» կամ «Արցախի սահմանագիծ»:

Հաջորդ օրինակն այսպիսին է. **«Ադրբեջանում որոշել են պատերազմ սկսել Լեռնային Ղարաբաղի համար»:** Նյութն այսպես է վերնագրել lurer.com կայքը:

Լրագրողը կամ թարգմանիչը բառացիորեն թարգմանել է ադրբեջանական կայքի նյութն ու նշելով սկզբնաղբյուրը՝ հրապարակել.

«Անցյալ շաբաթ օրը Ադրբեջանում գործող «Ղարաբաղի ազատագրության կազմակերպություն»-ն իր 4-րդ գումարումն է հրավիրել, որի ժամանակ որոշում է կայացրել պատերազմով, այսպես ասած, «ազատագրել» Լեռնային Ղարաբաղը հայերից. փոխանցում է Contact.az ադրբեջանական կայքը»:

«Վերջինս կարծում է, որ Ադրբեջանի առաջնային խնդիրներից մեկը հանրությանը պատերազմին նախապատրաստելն է և հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին վերջ դնելը...»

Պատերազմն անխուսափելի է: Մենք բանակ ունենք, փող ունենք, զենք ունենք: Ի՞նչն է մեզ խանգարում: Առանց Ղարաբաղի՝ Ադրբեջանը գոյություն չի ունենա», - հայտարարել է կազմակերպության ղեկավարը¹:

Ադրբեջանական քարոզչական ուղերձներ պարունակող նյութը հրապարակվել է առանց որևէ մեկնաբանության: Չեն հանվել քարոզչական թեզեր, օրինակ՝ «Ադրբեջանը շատ փող ունի, զենք ունի»: Իսկ ո՞վ ասաց, որ Հայաստանը զենք չունի:

Mamul.am-ը հերթական գլուխգործոցն է հրապարակում՝ ակտիվ հղում դնելով prezident.az-ի վրա, որտեղից էլ թարգմանել է ադրբեջանական «armenia.az» կայքը: Նշենք, որ վերջինս բացահայտ քարոզչություն է տանում հայկական լսարանի համար: **Հետաքրքիր է, որ նյութը կարդացվել է 4824 անգամ, մեկնաբանվել հազարից ավելի անգամ:** Մտահոգիչ է, որ մեկնաբանողների գրեթե 90 տոկոսն ուղղակի «կերել է» ադրբեջանական, այսպես ասած «կուտը»: Կառավարությունից, բանակից, կյանքից դժգոհ հասարակությունը փառաբանում է Ալիևի խոսքերը՝ չգիտակցելով դրա վտանգի մասին: Վերնագրված է՝ **«Զորահանդեսը ցուցադրեց ադրբեջանական բանակի ուժը. Իլիան Ալիև»:**

Նյութում ադրբեջանական բանակի գովքն է, հզորությունը, ռազմական տեխնիկայի ուռճացված թիվը և այլն.

Նիստի ժամանակ Ալիևն իր սրտի խոսքն է հայտնել հայ ժողովրդին՝ նշելով. «Կարծում եմ, որ հայ ժողովուրդը չպետք է վախենա մեր տեխնիկայից: Հայ ժողովուրդը պետք է վախենա իր ղեկավարությունից: Պետք է զուլշանա նրա գործունեությունից... Մենք ուժեղ պետություն ենք: Մեր ուժն աստիճանաբար աճելու է»²:

Ադրբեջանի հզորություն, «նորագույն» զենք, իսկ Հայաստանում՝ աղետ, վատ ղեկավարություն և այլն: Նպատակը մեկն է՝ լարված մթնոլորտ ստեղծել երկրում, երկպառակություն սերմանել, և ազդել բնակչության հոգեբանական վիճակի վրա:

Հարց է առաջանում, արդյո՞ք այս կայքը նման խանդավառությամբ կլուսաբանի հայկական զորահանդեսներն ու նույն գնահատականը կտա:

Մեր կարծիքով՝ արտասպուններն ավելի հաճախակի են դառնում ամռանը, երբ լուրերի քանակը նվազում է, իսկ աշխատավարձ ու գովազդատու օդ ու ջրի նման պետք է՝ սկսում են «քլիկաբերությամբ» զբաղվել:

Օրինակ՝ 2013 թ. հուլիսի 14-ին, hayeli.am կայքը հրապարակել է «Ադրբեջանը պատերազմ է հայտարարում» վերնագրով նյութ, որտեղ ադրբեջանական սպառնալիքն ու քարոզչությունը հասնում են միջնորդավորված, այս անգամ «Ռեզնում» գործակալության միջոցով: Իրականում ոչ մի արտասովոր բան չկա. Ադրբեջանի ՊՆ

¹ <http://lurer.com/?p=104929&l=am>

² <http://goo.gl/5SHaQq>

ճախարարը հերթական անգամ սպառնում է հայերիս պատերազմով, բայց ներկայացված է այնպես, կարծես ուր որ է Ադրբեջանը հարձակվելու է Հայաստանի վրա:

«Ադրբեջանի պաշտպանության ճախարար Սաֆար Աբիևը հայտարարել է, որ իր երկիրը պատրաստվում է պատերազմ սկսել Հայաստանի դեմ: Ինչպես նաև նշում է, որ իրենք գործը հզորացնում են այդ նպատակով»¹:

«Նա նման հայտարարությամբ է հանդես եկել Բաքվում Հարավային Կորեայի Ազգային ժողովի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ: Աբիևը պնդել է, թե հայերը բռնազավթել են իրենց հողերը: «Ադրբեջանական հողերը, որոնք բռնազավթվել էլ են Հայաստանի օկուպանտական քաղաքականության արդյունքում, չեն վերադարձվում արդեն 20 տարի: Չնայած հակամարտությունը խաղաղ ձևով կարգավորելու ջանքերին՝ Հայաստանը շարունակում է իր օկուպանտական քաղաքականությունը: ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությունը նույնպես առայժմ չի տվել որևէ արդյունք,- ասել է Ադրբեջանի պաշտպանության ճախարարը»²:

Տարածվում է ադրբեջանական քարոզչամեթոդային այն թեզը, որ «հայերը օկուպանտ են», որ «Ղարաբաղն իրենցն է ու հայերն արդեն 20 տարի հետ չեն տալիս», և վերջապես ադրբեջանցիները մի օր հարձակվելու և հետ են «վերցնելու իրենց հողերը»:

Նման իրավիճակ է նաև հայ ռազմագերի Հակոբ Ինջիղուլյանին պարտադրած «հարցազրույցի» դեպքում: Հայկական մի շարք կայքեր, տառապելով ռեյտինգի ապահովմամբ ու սենսացիաների հետևից ընկած, չգիտակցելով կամ էլ լավ գիտակցելով, կերան ադրբեջանական խայծն ու տղային որակեցին որպես դավաճան: Ադրբեջանը քարոզչության համար հարմար թեկնածու ուներ՝ Հակոբը, ում միջոցով էլ ազդեցին ու շարունակում են ազդել հայ հասարակության վրա: Տեսանյութում ակնհայտորեն լսվում է, թե ինչպես է Հակոբը հայերեն պատմում, որ գնացել է ջրի հետևից, սակայն ռուսերեն թարգմանվում էր, որ կամավոր հանձնվել է ադրբեջանական կողմին: Դրանից հետո հայաստանյան մի շարք լրատվամիջոցներ առանց փոփոխությունների վերահրապարակեցին տեսանյութի մասին Haqqin.az ադրբեջանական կայքի տեքստը՝ մատնանշելով, որ «ուղիղ խոսքն» են մեջբերում:

Հակոբի հարցազրույցը չտարածելու կոչով media.am կայքը հրապարակեց մի հոդված, որտեղ հանգամանալից նշված են բոլոր սխալներն ու վտանգները՝ առաջին հերթին Հակոբի համար³:

«Եթե տեսանյութը հրապարակվում է «ԲԱՅԱՌԻԿ ՏԵՍԱՆՅՈՒԹ. Ադրբեջանում Հակոբ Ինջիղուլյանի բացահայտումները հայոց բանակի մասին» կամ «Акоп Инджигулян предатель» վերնագրերով, ապա լրագրողը և խմբագիրը պետք է լավ գիտակցեն մի կարևոր բան. այդ նյութը միանշանակ կարդալու է նաև ադրբեջանական հետախուզությունը: Հետո այդ նյութերը տանելու են ու դեմ տան Հակոբին: Նաև՝ տակը գրված բոլոր այն մեկնաբանությունները, որտեղ մարդիկ իրեն անիծում են վերջին խոսքերով:

Մի բան է, երբ մարդու վրա ճնշում է գործադրում թշնամու հատուկ ծառայության աշխատակիցը, մեկ այլ բան, երբ նա տեսնում է, որ հայրենիքում իրեն համարում են թշնամի: Մարդուն կոտորելու համար ավելի վատ բան դժվար է անել: Ամենավատեսական մոտեցումներով մարդուն դրդում են չվերադառնալ Հայաստան, ընտանիքի վրա խաչ են քաշում: Եվ սա այն դեպքում, երբ ամեն ինչ արվում է իրեն հայրենիք վերադարձնելու համար⁶:

Եվ վերջապես ամենաթարմ օրինակներից: ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԵՆԽԿ-ում: 1in.am լրատվակայքը թարգմանում է ադրբեջանական APA գործակալության նյութն ու հրապարակում առանց որևէ փոփոխության: Վեր-

¹ Տե՛ս <http://hayeli.am/article/328696/>

² Տե՛ս <http://hayeli.am/article/328696/>

³ Տե՛ս <http://media.am/injighulyan-case-and-media>

նագրված է՝ «Պաշտոնական Բաքուն արձագանքել է ԵՏԽԿ-ում Սերժ Սարգսյանի ելույթին»։

«Ադրբեջանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Էլման Աբդուլաևը հայտարարել է, որ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը «միջազգային հանրության առաջ կրկին խոստովանել է, որ նա ազդեցոր երկրի ղեկավար է և մինչև հիմա անցկացնում է տարածքային հավակնությունների քաղաքականություն հարևան երկրների հանդեպ», - հաղորդում է APA գործակալությունը։

Դիվանագետի խոսքերով՝ «սպառնալով Ադրբեջանին՝ Սարգսյանը սպառնում է ամբողջ տարածաշրջանի անվտանգությանը»։

1in.am-ից վերցնում է «Լրատվական ռադիոն»՝ հղում անելով միայն 1in.am-ին՝ մոռանալով APA գործակալության մասին, այն ներկայացնում հանրությանը։ Ռադիոն նյութն այդպես ներկայացնելով ՀՀ նախագահի խոսքերն իսկապես որակեց որպես ազդեցիկի նշան։ Եվ բոլոր նրանք, ովքեր ծանոթ չէին ադրբեջանական տարբերակին Հայաստանի դիրքորոշումն այս պարագայում սկսեցին կասկածի տակ դնել ու հայտնվել քարոզչության ազդեցության տակ։

Այսպիսով, հայկական մեդիադաշտում աննախադեպ ծավալներով արտատրավում են հակառակորդի գրեթե բոլոր հրապարակումները։ Ոմանք գուցե հասկանալով, իսկ շատերը չհասկանալով ջուր են լցնում ադրբեջանական քարոզչամեթոդային ջրաղացին։ Նման աշխատառճը սպառնալիք է մեր ազգային անվտանգությանը, քանի որ ճգնաժամային իրավիճակում չկա երաշխիք, որ կեղծ տեղեկատվությունը չի տա իրական վնաս, օրինակ՝ խուճապ կստեղծի՝ հարվածելով առաջին հերթին սահմանին կանգնած զինծառայողին և սահմանապահ գյուղի բնակչին։ Հայաստանը փաստացի դեռ պատերազմում է ու կնքվածը միայն զինադադար է։ Լայնամասշտաբ գործողությունների վերսկսման վտանգն ամեն պահ է, իսկ այդ հարցում համարժեք պահվածք, փաստացի տեղեկատվություն ու վերլուծություններ տալը լրագրողի պարտականությունն է։ Այստեղ անձնական շահը պետք է զիջի պետական շահին, որովհետև սեղանին դրված է ազգային անվտանգության հարցը։

ПЕРЕПЕЧАТЫВАНИЕ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ПРОПАГАНДЫ В АРМЯНСКОЙ ПРЭССЕ

Асмик Меликсетян

Уже более 20 лет Армения и Азербайджан ведут информационную войну на всех доступных медиаплатформах. В статье мы показали как азербайджанские статьи появились на армянских сайтах в дословном переводе.

COPYING THE AZERBAIJANI MASS MEDIA IN ARMENIAN MASS MEDIA

Hasmik Meliksetyan

For more than 20 years Armenia has been in information and propagandic war with Azerbaijan. During this war when there is too much flow of information some wrong analysis and omissions are made by the Armenian journalism. We have presented how the Azerbaijani articles are being literally translated and entered in the Armenian websites.